ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-4 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2014թ-ի դեկտեմբերի 5-ին կնքված ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-4 ծածկագրով պայմանագրում 2015թ-ի նոյեմբերի 11-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ:

Պայմանագրով սահմանվել է, որ 2014 թվականին հատկացվելիք ֆինանսական միջոցների և պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ բացասական տարբերությունը կվճարվի այդ նպատակի համար համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն:

Պայմանագրով նախատեսված 2014 թվականին հատկացվելիք ֆինանսական միջոցների և պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ բացասական տարբերության համար հատկացված ֆինանսական միջոցների նպատակով 11.11.2015թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 13.08.2015թ. թիվ 944-Ն որոշում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 117:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-5
05.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-4 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «11» Հոկտեմբերի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Ա.Եսայանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 05.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-4 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1.Պայմանագրի 7.5 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Այյունեթվորքս» ՍՊԸ
ք.Երևան, Մելիք Ադամյան 1	ք. Երևան, Տերյան 19-4
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 02588485
Հ/Հ 900000900986	Հ/Հ 1930042785480100
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	Ա.Եսայան

Հավելված
Հաստատված է
«05» դեկտեմբերի 2014թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-4
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը *	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ. ՌԴ-ի կառավարության աջակցությամբ իրականացվող ԵՏՄ-ի անդամակցության շրջանակներում ՀՀ-ին տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու դրամաշնորհային ծրագրից, ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
Մաքսային միությանը և Բելառուսի, Ղազախստանի Հանրապետությունների, Ռուսաստանի Դաշնության միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի արդիականացման և/կամ նոր տեղեկատվական համակարգերի ներդրման աշխատանքներ	5132										3 283 580 000	3 283 580 000	3 283 580 000

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք.Երևան, Մելիք Ադամյան 1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900000900986
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝
Դ. Սարգսյան

ԿԱՏԱՐՈՂ
«Այյունեթվորքս» ՍՊԸ
ք. Երևան, Տերյան 19-4
ՀՎՀՀ 02588485
Հ/Հ 1930042785480100
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա. Սահակյան